

ԿԱՇՎԵ ԹԻԿՆՈՑԻՑ
ՄԻՆՋԵՎ ԿԱՇՎԵ ԳՆՊԱԿ

დავით ჭიშკარიანი

ბუცები და ტყავის ჩეხმა

თბილისის „დინამო“ ჩეკისტების
კლუბიდან ეროვნულ სიმბოლომდე

Դավիթ Զիշկարիանի

ԿԱՇՎԵ ԹԻԿՆՈՑԻՑ ՄԻՆՋԵՎ ԿԱՇՎԵ ԳՆՊԱԿ

Ինչպես Թբիլիսիի «Դինամոն» չեկիստական
ակումբից դարձավ ազգային խորհրդանիշ

Թարգմանությունը վրացերենից՝
Ռուզաննա Վարդերեսյանի



ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578
Ձ 609

Ջիշկարիանի Դավիթ
Ձ 609 Կաշվե թիկնոցից մինչև կաշվե գնդակ / Դ. Ջիշկարիանի.- Եր.:
Newmag, 2024.- 200 էջ:

Խորհրդային տարիներին սպորտային ակումբները գործում էին պետական գերատեսչությունների հովանավորությամբ: Թբիլիսիի «Դինամո» ֆուտբոլային ակումբը պատկանում էր Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատին, որը 1920-1930-ականներին ղեկավարում էր Լավրենտի Բերիան: Թիմի սպորտային վերելքն ու ֆուտբոլիստների անձնական ողբերգությունները կապված էին հենց այդ հանգամանքի հետ. ավելին, դրանք միահյուսված էին: Խաղադաշտից դուրս որոշ ֆուտբոլիստներ եղել են Ներքին գործերի կոմիտեի քննիչներ, մյուսները՝ զանգվածային ճնշումների զոհ: Այդքանով հանդերձ չեկիստական ակումբը դառնում է Վրաստանի ազգային հպարտության խորհրդանիշ և 1981-ին նվաճում ՈւԵՖԱ-ի Գավաթակիրների գավաթը՝ մեկը մյուսի հետևից հաղթելով եվրոպական գրանդ ակումբներին: Խորհրդային թիմի համար արտասովոր հաջողություն էր: Այս գիրքն ուսումնասիրում է վրացական ֆուտբոլային ակումբի բացառիկ պատմությունը և փորձում պատասխանել այն հարցին, թե ինչու է այդ հաղթանակը շատ կարևոր առաջուր, և Թբիլիսիի «Դինամոն» ինչ տեղ է զբաղեցնում վրացիների գիտակցության մեջ:

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578

Այս գիրքը հրատարակվել է
Վրաստանի գրողների տան
ֆինանսական աջակցությամբ:

The book is published with the support of
the Writers' House of Georgia.



**Writers' House
of Georgia**

ISBN 978-9939-967-46-2

© Davit Jishkariani, 2021

© Ziari Press, 2021

Դավիթ Ջիշկարիանի, «Կաշվե թիկնոցից մինչև կաշվե գնդակ» © 2024 «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Իրավունքները ձեռք են բերվել Ziari Press ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Հայերեն հրատարակության առաջաբան	7	
Նախաբան	11	
Ներածություն	14	
Գլուխ I	Մանգանը, արդյունաբերությունը և ֆուտբոլը	21
Գլուխ II	Ֆիզկուլտուրան, ֆուտբոլը և միջազգային խաղերը՝ մինչև 1936 թվականը	33
Գլուխ III	«Դինամո» մարզական ընկերությունը և Բերիայի անվան մարզադաշտը	49
Գլուխ IV	Ֆուտբոլիստ Փսիշկան	73
Գլուխ V	Բասկ ֆուտբոլիստները և 1937 թվականը	89
Գլուխ VI	ՆԳԺԿ-ի աստիճանավոր ֆուտբոլիստները	105
Գլուխ VII	Ֆուտբոլը և պատմություններ Երկրորդ համաշխարհային պատերազմից	131
Գլուխ VIII	Պետք է ոչ թե պաշտպանվել, այլ հարձակվել	149
Վերջաբանի փոխաբան	163	
Կենսագրական տեղեկություններ	171	
Ծանոթագրություններ	181	
Լուսանկարների հեղինակներ	197	

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր գիրք իր պատմությունն ունի, և այդ առումով այս ուսումնասիրությունն էլ, որին այժմ ընթերցողը ծանոթանում է, բացառություն չէ: Այս գրքի վրա սկսեցի աշխատել պատահաբար, նույնիսկ չգիտակցեցի, թե ինչպես սկսեցի: Դեռևս որպես մագիստրատուրայի ուսանող՝ Վրաստանի ներքին գործերի նախարարության (նախկին ԿՀՎ) արխիվում տեսա փաստաթղթեր, որոնցում շարադրված էր այս գրքի պատմությունների մի մասը: Այն ժամանակ զարմացա և մտածեցի՝ մի՞թե ֆուտբոլիստը կարող է որևէ մեկի հանդեպ բռնանալ: Մի՞թե միմյանց նկատմամբ վստահություն չկար: Ֆուտբոլիստը ՆԳ ժողկոմատի պե՛տ: Այդ օրը այսպիսի բազմաթիվ հարցեր էին գլխումս պտտվում: Մտածում էի, որ այս թեմայի վերաբերյալ այլևս ոչինչ ինձ չի կարող զարմացնել, բայց ամեն անգամ չարաչար սխալվում էի: Թեմայով ես այնքան տարվեցի, որ գրեթե 10 տարի նյութեր էի հավաքում և ամեն մի նոր տեղեկությունից չէի դադարում զարմանալ: Շարունակում էի զարմանալ նույնիսկ այն ժամանակ, երբ վերջակետ դրեցի և գիրքն ավարտեցի: Իսկ գրքից այն կողմ մնացած պատմությունները շարունակվում են, ավելանում ու կուտակվում: Դա մինչև օրս էլ այդպես է, դրա վերջը չի երևում, անհնար է:

Գրքի հայերեն թարգմանությունը այդ պատմությունների շարունակությունն է: Գիրքը թարգմանվում է մի լեզվով, որը մոտ է ոչ միայն Վրաստանի պատմությանը, այլև վրացական ֆուտբոլին: Ավագ սերնդի ներկայացուցիչներն այստեղ շատ բան կարող են հիշել Թբիլիսիի «Դինամոյի» և Երևանի «Արարատի» զարմանալի ֆուտբոլային մարտերից, որոնք սպորտից բացի նաև ազգային բնույթ էին կրում: Շատ հումորներ ու բանավոր պատմություններ կան այս թեմայով: Այս գրքով Թբիլիսիի «Դինամոյի» պատմությունը վերադառնում է հարազատ միջավայր՝ հերթական տարօրինակ շրջագայությամբ:

Ինձ՝ հեղինակիս համար այս գրքի հայերեն թարգմանությունն անձնական մեծ կարևորություն ունի: Ես Սուխումում եմ ծնվել՝ Աբխազիայում: Այնտեղ՝ մեր հարևանությամբ, հայեր էին ապրում, ես նրանց հետ էի մեծանում: Որքան էլ մանկությունը ծանր ժամանակաշրջանի հետ համընկնի, այնուամենայնիվ այն քաղցր ու հաճելի հիշողություններ է արթնացնում: Իմ հուշերի, մանկության հիշողությունների մեծ մասը կապված է այն հրաշալի մարդկանց հետ, որոնք մինչև օրս էլ Սուխումում են ապրում: Ստեղծված քաղաքական իրավիճակի պատճառով նրանց անուններն ու ազգանուններն այստեղ նշել չեմ կարող, բայց նրանք շատ խոր արմատներ ունեն իմ հիշողություններում:

Հաճելի է, որ այս գրքին իրենց մայրենի լեզվով կկարողանան ծանոթանալ իմ գործընկերներն ու ընկերները, որոնցից ես շատ բան եմ սովորել և միշտ ուրախ եմ նրանց հանդիպել, նրանց խորհուրդները լսել:

Ազնիվ չեմ լինի, եթե այս առաջաբանն ավարտեմ՝ առանց անեկդոտ պատմելու: Հումորը հենց այն է, ինչը հայերիս ու վրացիներիս օգնում է հաղթահարել այս դժվար ժամանակները:

Երեկոյան ֆուտբոլ է. Թբիլիսիի «Դինամոն» խաղում է Երևանի «Արարատի» հետ:

Թբիլիսիում վարսավիր Արմենին հաճախորդը հարցնում է.

— Արմեն՝ն ջան, այսօր ո՞վ կհաղթի:

— Կանեշնա մերոնք:

Անկեղծ շնորհակալություն բոլոր «մերոնց», որոնց ջանքերով նախ՝ հնարավոր եղավ գրել այս գիրքը, ապա՝ հնարավոր դարձավ այն հայերեն թարգմանել:

Դավիթ Զիշկարիանի

Մայիսի 8, 2024

Թբիլիսի, Վրաստան



Լուսանկար 1. «Դինամո» մարզադաշտ

*Առաջ: Ֆիզկուլտուրան հզորացնենք,
որպեսզի ունենանք մեծ և էլ ավելի մեծ առաջընթաց:
Գալակտիոն**

Պապս առանձնահատուկ տեղ ունի իմ կյանքում: Նրա շնորհիվ եմ կյանքում շատ բաների համը տեսել: Նա է ինձ տարել թանգարան, որտեղ առանձին վճարել է զբոսավարին, որպեսզի ինձ՝ 4-5 տարեկան երեխայիս համար «առանձնահատուկ» էքսկուրսիա կազմակերպի: Այդ արտասովոր թվացող էքսկուրսիայից հիշողությանս մեջ մնացել է միայն վճարելու պահը:

Առաջին անգամ նա է ինձ նավով զբոսանքի տարել և ինձ համար երանելի հեռադիտակով դելֆիններ ցույց տվել: Հենց նա է ինձ հիասթափեցրել առաջին անգամ, երբ օբյեկտիվ պատճառներով մերժել է դելֆինին տուն տանելու և լողավազանում բաց թողնելու իմ առաջարկը: Մի քանի օր հեռադիտակը տանն էր՝ ինձ մոտ, և ես սկսեցի ամեն ինչին նայել խոշորացույցով: Սակայն հեռադիտակի հարցում նույնպես վայելքը կարճ տևեց. մորս խիստ վճռով այն բռնագրավվեց, քանի որ կյանքիս համար վտանգավոր էր դարձել: Նախ ոտքս խփեցի բազրիքին, հետո, հեռավորությունը չափելով տարվաձ, քիչ մնաց՝ առվի մեջ ընկնեի, վերջում, մասշտաբի կարգավորմամբ զբաղված, մի քանի անգամ քիթ ու մոուրով բախվեցի բետոնե խուլ պատին:

Մի անգամ՝ հերթական զբոսանքի ժամանակ, պապս մի քանի թերթ գնեց և, ի զարմանս ինձ, չսկսեց կարդալ: Մի քիչ քայլեցինք ու ձեռք ձեռքի տված մտանք տարօրինակ կառուցվածքով մի շինություն: Շրջանաձև նստարանի վրա նա հոգատարությամբ փռեց թերթը, որպեսզի այդ մի նստարանը, որին ես նստելու էի, մաքուր լիներ: Երբ համոզվեց, որ թերթը

* Գալակտիոն Գալակտիոն Տաբիձե (1891-1959) - վրացի խորհրդային գրող:

կապաշտպանի ինձ փոշուց, սկսեց մանրամասն հրահանգավորել, թե ինչ և ինչպես պետք է անեն մարզադաշտում: Մարզադաշտում առաջին անգամ ներկա գտնվելս ավարտվեց հեռադիտակի դեպքում պատահած կրախի պես. մի քանի րոպե անց ես հոգնեցի գնդակի հետևից վազող 22 ֆուտբոլիստներին նայելուց, սկսեցի փնթփնթալ ու այդ երեկո տուն վերադարձա՝ ձեռքումս նոր կաշվե գնդակ:

1980-ականների վերջին և 90-ականների սկզբին, այսինքն՝ իմ մանկության տարիներին, դա արդեն լավ կայացած ավանդույթ էր. ընտանիքի ավագը պետք է իր տղա թոռանը անպայման տաներ մարզադաշտ և տղամարդկային մարզաձևի համը զգալ տար: Այդպես ֆուտբոլը մտավ իմ կյանք: Հետո հայտնվեցին «Վրաստանի ծայնի» «ցանցահենական» ռեպորտաժները, ու սկսվեցին էլեկտրամատակարարման անջատումները: Ամիսներ շարունակ ամբողջական խաղ դիտել չէր ստացվում. կա՛մ սկիզբն էին ցույց տալիս, կա՛մ վերջին մասը: Ես դեռ հիշում եմ, որ հոսանքը Ա սերիայի (Իտալիայի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնություն) խաղի ավարտից հետո պետք է անջատեին, բայց լրացուցիչ ժամանակ ավելացվեց, որը նախատեսված չէր: Այնպես որ, հաճախ հաջորդ օրը մամուլի միջոցով էինք իմանում խաղի հաշիվը:

Իմ իսկական ուսուցչուհին՝ Ինգա Արդութինսկայան, նույնպես ֆուտբոլի մեծ սիրահար էր: Տարիներ շարունակ նա մանկական գրադարանի տնօրեն է եղել. հաճախ էր ֆուտբոլի մասին գրքեր բերում: Երբ նրա տուն էի գնում, այնտեղ ինձ միշտ սպորտային ամսագրեր էին սպասում. նա հաճախ էր լսում ֆուտբոլային ռադիոռեպորտաժներ: Ռուսաց լեզվի և գրականության հետ ինձ շատ այլ բաներ էր սովորեցնում: Նա առաջինն էր, որ ինձ հետ խոսեց ֆուտբոլի մասին՝ որպես սոցիալական երևույթի: Ինձ պատմում էր, թե ինչպես էր 1940-ականներին լեփ-լեցուն տրամվայով Մոսկվայի պողոտայից հասնում Դիդուբե՝ Թբիլիսիի «Դինամոյի» խաղերը դիտելու: Հաճախ էլ հավելում էր՝ կին և ֆուտբոլ. դա այն ժամանակ հազվադեպ երևույթ էր: Ասում էր, թե մայրը վախենում էր իր քմահաճույքներից և թաղի տղաներին հանձնարարում էր, որ իր հանդեպ ուշադիր լինեին: Հիմա, երբ ուշադիր նայում եմ նրան, զգում եմ, որ այդ օրերը մեծ կարոտով է հիշում: Չգիտեմ՝ կարոտել է իր երիտասարդությունը, ծնողների՞ն, հին ժամանակների ֆուտբոլիստների՞ն, թե՞ բոլորին միասին, բայց զրույցի վերջում անպայման ավելացնում էր. «Ուո՛ւհ, ի՛նչ խաղալ էին

խաղում»: Նրանց տունը 31-րդ գործարանի մոտ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին պատմելիս սիրում էր երկու բան հիշել. առաջինը բանվորներն էին, որոնք աշխատում էին գործարանում, և որոնց մաշկը դեղնած էր երկարատև ու տքնաջան աշխատանքից, իսկ երկրորդը կույր մուրացկանն էր: Մի անգամ երեխաների գլորած գնդակին այդ կույրը ոտքով հարվածել է: Դրանից հետո ամբողջ բակում լուր է տարածվել, որ այդ մարդը ոչ թե աչքի լույս չունի, այլ գերմանացի հետախույզ է, նաև ֆուտբոլիստ: Այս պատմությունը հիշելիս սրտանց ծիծաղում էր: Հաճախ պատմում էր, որ իր հայրը՝ Գրիգորը, նույնպես սիրում էր ֆուտբոլ և խաղացել է թբիլիսյան թիմերից մեկում: Այդ ժամանակ ես ո՛չ խելք ունեի, ո՛չ էլ փորձ, որ այդ պատմությունները գրի առնեի: Այնուամենայնիվ, իմ հուշերում մորաքույր Ինգան (ինչպես ես էի նրան անվանում) և ֆուտբոլի մասին նրա հիշողությունները իրենց հատուկ տեղն են գրավել:

Ֆուտբոլի հետ իմ հարաբերությունների մեկ այլ հետաքրքիր դեպք պատահել է իմ ուսանողական տարիներին: Գոգի Դեմետրաձեն մեզ Ռուսաստանի պատմություն էր դասավանդում, բայց մեզ հետ ավելի շատ խոսում էր Պելեի, Ինյեստայի և Ղիփիանիի մասին, քան Ալեքսանդր Երկրորդի, Նիկոլայ Առաջինի կամ Ռասպուտինի: Մեզ հաճախ տանում էր Վերայի զբոսայգու «բորսայի տղաների» մոտ (նրանց միջին տարիքը 70-ից բարձր էր), որտեղ բուռն քննարկում էին ֆուտբոլը: Մի անգամ, Վրաստանի հավաքականի պարտությունից դառնացած, նա բացականչեց. «Սրանք ինձ ստիպեցին, որ կարոտեմ Բերիային. ճիշտ է, պապիս գնդակահարել է, երբ մայրս ինձնով հղի է եղել, բայց փոխարենը ինձ համար «Դինամո» մարզադաշտն է կառուցել»: Լավրենտի Բերիայի անվան վրա երկար ժամանակ տաբու էր դրված, իսկ Թբիլիսիի «Դինամոյի» խաղացողների անունները հաճախ մինչև վերջ չէին գրվում, և նրանց ցուցակն ավարտվում էր «և այլնով»: Մեծ պատմություններ էին թաքնված «և այլնից» հետո դրված բազմակետերում: Իմ խամրած հիշողության և խնդրին անտեղյակ լինելու պատճառով Գոգիի այդ հայտարարությունն իմ մեջ միայն ծիծաղ առաջացրեց, և այն վերագրեցի նրա հերթական քնահաճույքին: Ժամանակը ցույց տվեց՝ սխալվում էի:

2012 թվականին Չոր կամրջի վրա հին իրերն էի ուսումնասիրում: Փաստաթղթերի կույտի մեջ՝ մի փոքրիկ ալբոմի դիմերեսին, «Դինամո» մարզադաշտն էր պատկերված, իսկ բովանդակությունը խաղաքարտերի պես էր ձևավորված, և բացի յուրաքանչյուր ֆուտբոլիստի լուսանկարից, անուն-ազգանունից՝ նշվում էր նաև նրա դիրքը խաղադաշտում: Տղաները մեզ էին նայում խամրած ու դեղնած թղթերից: 1937 թ. Թբիլիսիի «Դինամոն» էր: Հետո մի դետալ նկատեցի, թեպետ սկզբում դրան առանձնապես ուշադրություն չդարձրի: Եթե խմբակային լուսանկարում տասնմեկ հոգի էր, քարտերն ընդամենը ինն էին: Վաճառողը հարցիս պատասխանեց այնպես, ինչպես ճանապարհում են ոչինչ չգնող, առանց փողի հաճախորդին գլխառադ անելիս. «Ով եղել է, բոլորն այդտեղ են»: Մտքումս մնաց այդ երկու ֆուտբոլիստների պատմությունը: Մի անգամ արխիվներում մեկ այլ քրեական գործ փորփրելիս բացահայտեցի, թե ովքեր են այդ երկուսը և ինչու չկային ալբոմում:

Ֆուտբոլը նախ և առաջ սոցիալական մեծ երևույթ է, որի ձևավորման և զարգացման վրա մեծ ազդեցություն ունի քաղաքական դաշտը: Այն ունի նաև սոցիալական մեծ ազդեցություն և հաճախ նպաստում է տարբեր գաղափարների առաջացմանն ու գոյությանը: Որոշ երկրների համար ֆուտբոլն ազգային ինքնության հիմնական առանցքն է: Հարավային Ամերիկայի երկրները դրա դասական օրինակն են: Վրացիների համար ֆուտբոլը երբեք պարզապես մարզաձև չի եղել, հատկապես այն երկրում, որը կոչվում էր Խորհրդային միություն, նաև այն ժամանակ, երբ պետությունը մեծ վերափոխումներ էր նախանշում: Խորհրդային ֆուտբոլն ինքնին եզակի երևույթ է խաղաձևի համաշխարհային պատմության մեջ: Ոչ մի տեղ չեն եղել ազգային խորհրդանիշերով համալրված այդքան ֆուտբոլային ակումբներ, որքան հանդես են եկել ԽՍՀՄ մեկ առաջնությունում:

Այդ թիմերից յուրաքանչյուրի մոտիվացիան տարբեր էր: Ֆուտբոլի պատմությունը նաև քաղաքականության պատմություն է, ուստի կփորձեմ

Ֆուտբոլիստներին և նրանց խաղն ու արդյունքները վերլուծել ու ներկայացնել քաղաքական զարգացումների համատեքստում:

Ֆուտբոլը նաև չիրականացված հույսերի ու երազանքների խորհրդանիշ է: Վրաստանում այն սկսվում է գնդակը գլորելու պահից: Ուշադիր աչքը «Առաջին ծիծեռնակը»* գեղարվեստական ֆիլմում կնկատի, որ ոչ մի ֆուտբոլիստ ուրախ և ապահով կյանք չի ունեցել: Յուրաքանչյուրն իր հոգան ուներ և պայքարում էր հանուն ինչ-որ բանի: Այդ ժամանակ նրանց կյանքում հայտնվում է ապագայի հույսը՝ ֆուտբոլը: Գրող Ցոտնե Ցխվեդիանին իր ստեղծագործության մեջ նկարագրում է նաև Տղիբուլիի բանվորների գործադուլը, որին մասնակցում է 60-ամյա հանքափոր, տեղի ակումբի նախկին դարպասապահը: Միայն ֆուտբոլ խաղալով է նա մոռանում սոցիալական անտանելի վիճակի մասին: Ֆուտբոլը հույս է արթնացնում և վերադարձնում կյանքի համը¹:

Այս գրքի վրա աշխատելիս հաճախ էի հանդիպում մարդկանց, որոնք տարիքով էին, առողջական խնդիրներ էլ ունեին, բայց հենց ֆուտբոլի ու Թբիլիսիի «Դինամոյի» մասին էի հիշեցնում, ամեն ինչ մոռանում էին, ոգևորվում և հուզմունքով էին խոսում իրենց սիրելի սպորտաձևի ու թիմի մասին: Հարց ու պատասխանը հաճախ վերածվում էր մի քանի ժամանոց զրույցի, ինչի համար երախտապարտ եմ նրանց:

Բազմաթիվ հարցազրույցներից հետո գիրք գրելու մտահղացումը դարձավ մարտահրավեր: Այդ մարդկանցից յուրաքանչյուրը եզակի գիտելիքի կրող է: Նրանց հայացքները նույնպես տարբերվող և յուրահատուկ են: Այդ ամենը տեքստի վերածելը, անհրաժեշտ մանրամասներն ընտրելը և դրանք գրքում ներառելը հեշտ գործ չէր: Այդ հանդիպումները կազմակերպելն էլ մի կյանք արժեր: Մի անգամ հերթական հարցազրույցն անցկացրի Լիկա և Մանանա Ճումբուրիձենների՝ նախկինում հայտնի ֆուտբոլիստ Գիորգի (Ժորա) Ճումբուրիձեի դուստրերի հետ: Հիշում էին հորն ու նրա ֆուտբոլիստ ընկերներին: Հիշում էին հետաքրքիր պատմություններ, երբ տիկին Լիկան իմիջիայլոց ասաց, որ հայրը մի անգամ նույնիսկ Սիբիր է հասել՝ տեսակցելու աքսորված ֆուտբոլիստ ընկերոջն ու թիմակցին՝ Լուարսաբ Լոլաձեին: Այդ փոքրիկ դրվագն ինձ համար խթան հանդիսացավ, որ արխիվում լրացուցիչ տեղեկություններ փնտրեմ:

* 1975 թվականին նկարահանված վրացական կատակերգական գեղարվեստական ֆիլմ, որը պատմում է՝ ինչպես են ծայրագավառի բնակիչները ծանոթանում ֆուտբոլին: